ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական
համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան
2015 թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանի, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցների, մասնագետների և համայնքի 123 բնակիչների.

15.07.2015թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 101,6 -% -ով
   ա) Հողի հարկ 106,0 %-ով
   բ) Գույքահարկ – 107,4 %-ով
   գ)Վարձակալական հ/հ –100,0 %-ով
   դ) սեփական եկամուտներ- 111,0 % -ով

2. 2015 թվականին առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 7 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ: Կատարվել է երեխաներին դպրոց ճանապարհելու հանդես, հանձնվեցին նվերներ:

5. Կիսամյակի ընթացքում 2 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում, տրվել է անվճար ակնոցներ բոլոր կարիքավորներին, որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին:

6. Կիսամյակի ընթացքում վթարվել են 10 անգամ տարբեր փողոցների խմելու ջրագիծը և 11 փողոցների կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

7. Ժամանակին կատարվել է ցորենի և գարու բերքահավաքը:

8. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:

9. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 2.000.000 դրամի օգնություն:

10. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:

11. Ամբողջ ուսումնական տարին Հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:

12. Գյուղի եվս 2 փողոցներում անց է կացվել գիշերային լուսավորություն:

13. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:

14. Հայտարարվել է բաց ընքացակարգով մրցույթ դպրոց տանող ճանապարհի հիմնանորոգման համար:

15. 2015 թվականի դրությամբ աշխատավարձի և սոց վճարների պարտքեր չկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ է

1. Դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատման խնդիրը, որն արդեն ընթացքի մեջ է:

2. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:

3. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի տանիքի վերանորոգման և սանհանգույցների վերանորոգման հարցը:

4. Լուրջ հիմնախնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:

5. Մնացել է չլուծված բուժ ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան